

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻՑ ԲԱՌԱԿԵՐՏՈՒՄԸ XX Դ.
ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բառակերտումը ձևայինների համակցմամբ բառական միավորի ստեղծումը, հայերենի բոլոր փուլերին հատուկ օրինաչափ լեզվական գործընթաց է: Սյն իր երկպալանալին բազմազանությամբ և յուրահատկություններով առանձնանում է գեղարվեստում: Լինելով գրողի անհատականության լեզվական արտահայտություններից հեղինակային բառն առաջին հերթին կոչված է ծառայելու հենց հեղինակին, արտահայտելու նրա գեղարվեստական ճաշակը, մտածողությունը, լեզվահմացությունը: Նշված բառերը լեզվի ոչ գործուն շերտին են պատկանում և կապված լինելով կոնկրետ տեքստային միջավայրի հետ տարածվելու, շրջանառվելու միտում չունեն ու մասամբ բառափոխարինման կամ կապակցության կրճատման արդյունք են:

Լեզվաբանական գրականության մեջ հեղինակային բառերն ընդունվում են իբրև նորաբանությունների ենթատեսակ¹ և անվանվում մի շարք տարբերակներով՝ *անհատական նորակազմություններ*, *անհատական-հեղինակային նորաբանություններ*, *անհատական-ոճական նորաբանություններ*, *խոսքային կամ անհատական նորաբանություններ*, *հեղինակային նորաբանություններ*, *հեղինակային նորակազմություններ*, *նորակազմ բառեր*, *ստեղծագործական կամ հեղինակային նորաբանություններ* և այլն: Իրենց ստեղծման պահին հատկանշվելով նորակազմությամբ՝ այս բառերը, սակայն, չեն պահպանում նորաբանություններին հատուկ մի շարք հատկանիշներ ժամանակի գործոնից կախում ունենալը, բառաշերտային անցումայնությունը, ստեղծման նպատակայնությունը՝ նոր երևույթ կամ բառափոխարինում արտահայտելու համար և այլն: Նույնիսկ նմանության եզրեր ունենալով՝ բառափոխարինման ոլորտում նորաբանություններն ու հեղինակային բառերն այն էական տարբերություններն են ցուցաբերում, որ առաջինների ստեղծման նպատակը լեզվական համակարգում գործառնող բառիմաստին հնչույթային ճիշտ արտահայտություն (ձևավորվածություն) տալն է կամ էլ փոխառյալ տարրերի փոխարինումը հայկականով: Այսինքն փորձ է արվում ստեղծելու լեզվի տվյալ փուլի համար գերադասելի տարբերակը: Սրա շնորհիվ ստեղծված բառը լեզվահամակարգում կայունանալու մեծ հավանականություն է ունենում: Մինչդեռ հեղինակային բառերը ստեղծագործողի անհատական մոտեցմամբ կերտված, միայն տվյալ երկին ծառայող միավորներ են և լինելով լեզվական համակարգում կանոնական գործառնություն ունեցող բառի տարբերակ կամ հոմանիշ՝ մասսայականացվելու, շրջանառվելու քիչ հավանականություն են ունենում, քանզի գտնվում են

հոմանշային շարքի եզրում (այստեղ մեծ նշանակություն ունի նրանց տեքստային միջավայրի ծնունդ լինելը):

Հեղինակային բառերի կառուցվածքային յուրահատկությունը բաղադրյալ լինելն է, տարածված բաղադրական հիմքերը՝ հասարակ անուններից կազմվածները: Հատուկ անուններից սերված կառույցները քանակային ու կառուցվածքային սահմանափակումներ ունեն և որևէ հեղինակի կերտած բառահամակարգում դեռևս մանրահամակարգ են: Սա բխում է նաև հատուկ անունների բառիմաստից զուրկ միավորներ լինելուց: Սակայն համըմբռնման հիմքի վրա իմաստի ձեռքբերման շնորհիվ աճում է նման բառերի բառակերտման ակտիվ միավորների վերածվելը: XXդ. հատկապես նրա երկրորդ կեսում, գրականության մեջ նկատվեց հատուկ անուններից բառակերտման ակտիվ գործընթաց: Անձնանուններից ու տեղանուններից ստեղծվեցին տարաբնույթ ուշագրավ բառեր, որոնց իմաստային ու կիրառական յուրահատկությունների պատճառ են նաև գրական տարբեր ժանրերում գործածվելը: Նշենք այդպիսի բառերի կառուցվածքային մի շարք յուրահատկություններ: Տարածված են *կաղապարային* եղանակի *հիմքամիացման* ու *ածանցման* միջոցներով կերտված կառույցները: Առաջին միջոցով բաղադրված բառերն առավելապես երկարմատ բարդություններ են, որոնցում գերակշռում են *գոյական +բայաչինք*, *գոյական+գոյական* կաղապարներով միավորները: Օրինակ անիապաշտ(ԳԴ)², արցախաբույր(ԳԳ), արցախատանջ(ԶՀ), բագրատունասեր(ՎԳ), գրիգորաշունչ(ՍԽ), դավթագարմ (ՎՀ), լևոնածին (ՀԽ), կայենածին (ՎԳ), հայկաբազուկ (ՍԽ), մեսրոպակերտ (ՎԱ), վարդանականչ (ՀԽ), տիգրանառաք (ՀԽ), քրիստոսամոռ (ՀԴ) և այլն: Մեր կողմից ուսումնասիրված բառերը հատկանվան նախադաս դիրքով ստորադասական հարաբերությամբ հոդակապվոր բարդություններ են և ունեն հատկանշային իմաստ: Նման կառույցներում բառակրճատման երևույթն ակնհայտ է առանձնապես այն դեպքում, երբ սերող կամ բաղադրող հիմքում վերաիմաստավորում չկա: Օրինակ «եվ *անիապաշտական* հայը գրահավորվեց սեփական ձեռքով պատրաստված զենք ու զրահով...»(ՀԽ): «-Ես ևս սոսկալի *անիապաշտ* եմ և Ամիի կարոտից եմ այրվել տասը տարուց ավելի...»(ԳԴ): «*Բագրատունասեր* իշխանները ...Ամբերդ էին շտապում միաբերան պնդելու, որ Սյունյաց իշխանի հայտնվելը Ամիի գահին չտեսնված ու չլսված բան է...»(ՎԳ) և այլն: Նման օրինակներում բառն ունենում է բաղադրիչների մեխանիկական միացումից առաջացած միավորի բնույթ: Այսպիսի բառեր կարելի է ստեղծել ցանկացած բառակապակցության կրճատումից, և սա խոսքի տարբեր դրսևորումներում հանդիպող երևույթ է: Մինչդեռ վերաիմաստավորված կառույցներում կա տարողունակ իմաստային դաշտ, որը թուլանում է, եթե փորձենք բարդության բաղադրիչները վերածել բառակապակցության բաղադրիչների: Այս դեպքում կառույցի արժեքն ու գեղարվեստական որակն ակնառու են: Օրինակ.«Դա իմ երգն է *արցախաբույր*,

արցախաճույլ, արցախաթույր»(ԳԳ): «Սիայն Գյուտ կաթողիկոսն էր, որ շարունակում էր բորբոքել նրա վարդանականչ ոգին»(ՅԽ): «-Դու՛րս, դու ռս այստեղից,- որոտաց արդեն համբերությունից ելած Կեսարացին,- սա չէ ձեր տեղը, գնացեք և խունկ ծխեցեք ձեր սատանայի առջև, ազգուրաց *քրիստոսամո՛ղբ»*(ՀԴ): «Աշխարհում ամեն ազգ իր աշխարհն ունի, մենք էլ մերն ունենք՝ մասիսասյուն մեր հայրենիքը»(ՅԽ) և այլն:

Անձնանուն+ծին կաղապարով բառերը երկարժեք գործածություն ունեն: Սերող հիմքի՝ իր անվանողական արժեքով գործածվելու դեպքում կառույցն արտահայտում է նշված անձնանվան հետ կապված կոնկրետ անձ, իսկ համըմբռնմամբ գործածվելու դեպքում ի հայտ է գալիս հատկանշային իմաստը, որի երանգը կախված է այդ անունը կրող անհատի պատմական դերից, հասարակության վերաբերմունքից: Այսպես *լևոնածին* (Լևոն Բ-ի անունից) բառը կարող է նշանակել և *Լևոնից ծնված*, և *քաջեր ծնող* (տոհմ, ազգ, երկիր և այլն): Այսպես են նաև *առանածին* (ՍԽ), *կայենածին*(ՎԳ), *կյուրոսածին*(ՅԽ) բառերը:

Ածանցումը ևս հատկանուններից բառակերտման տարածված միջոց է: Այստեղ առավելապես գործում են գոյականակերտ, ածականակերտ և բայակերտ ածանցները: Առաջիններից առավել գործածական են *-ական*, *(-ե,-ա)ցի*, *-ություն*, *-ուհի* ձևույթները: *-Ական* բառակազմական երկրորդական ձևույթը գոյականներ է կազմում անձնանվան հետ՝ նշանակելով *նշվող անունը կրող անձի հետ առնչություն ունեցող*, *նրան ծառայող*, *համակիր այլ անձ*: Անձնանունը կրող մարդու զբաղմունքից, պաշտոնից կոնկրետացվում է կառույցի բառային իմաստը: Օրինակ գորավարի անունից բաղադրվածները կնշանակեն *այդ գորավարին ծառայող զինվոր*, իսկ հոգևոր աստիճան ունեցողի անունից կազմվածները՝ *նրան հավատարիմ հոգևորական* և այլն: Այսպես են *թորոսական* (ՅԽ), *լուկուլլոսական* (ՅԽ), *կյուրոսական* (ՅԽ), *նիկոնական* (ՀԴ), *պետրոսական* (ՎԳ), *պոմպեոսական* (ՅԽ) և այլն: Այսպիսի բառերը տարածված են պատմական բնույթի երկերում և այդ տեսանկյունից կանոնական կառույցներ են ու պոտենցիալ(ներունակ) հատկանիշով են օժտված: Նմանատիպ են նաև *(-ե, -ա)ցի*.

-ուհի ձևույթներից բաղադրվածները: Սրանք, աշխարհագրական որևէ տեղանքի հետ կապված անձ նշելով, բնականաբար հանդես են բերում բազմազան ու բազմաբնույթ կառույցներ և իրենց պոտենցիալ հատկանիշի շնորհիվ օժտված են յուրաքանչյուր ստեղծագործության մեջ լինելու մեծ հավանականությամբ:

-Ություն ածանցով բաղադրված բառերն առավելապես հանդես են գալիս երկու մասնակաղապարներով *հատուկ անուն+ածանց* և *երկարմատ բարդություն+ածանց*: Առաջինով կերտված բառերում հատուկ անունը, ինքնին դառնալով սերող հիմք և չունենալով բառային իմաստ, հանդես է գալիս

այլաբերությամբ ձեռք բերելով իր հետ կապված առարկային հատուկ հատկանիշի իմաստը: Այսպես *արարատություն* բառը կնշանակի *բարձրություն*, իսկ *հերոսատոտություն* *փառամոլություն*: «Սեծին մանուկի անարատություն, Տափարակներին *Արարատություն*» (ՊՍ): «*Հերոսատոտություն* կար նույնիսկ Ալեքսանդր Մակեդոնացու մեջ» (ՀԽ):

Այսպիսի կառույցներն ուշագրավ են, քանի որ նրանցում գաղափարն արտահայտվում է այլ առարկայի, իրողության կարևորման, ընդգծման միջոցով, և սա, զուտ հեղինակի հայեցողության արդյունք լինելով, դառնում է նաև նրա աշխարհայացքի, աշխարհաճանաչողության արտահայտություններից մեկը: Այս առումով նշված տիպի բառերը նման են *հատուկ անուն+բայաժամաց* կաղապարով կերտված միավորներին: Սակայն հետաքրքիր է, որ քանակային տեսակետից գիշում են նրանց և առավելապես խոսակցական երանգ ունենալով մեծ մասամբ գործածվում են հրապարակախոսության մեջ: Հատուկ անուններից նման ձևով գոյականների կերտումը նաև հիմնականում կատարվում է ածականացված հիմքից, օրինակ *Քաջ Նազար - քաջնազարական - քաջնազարականություն*, *Բուդղա - բուդղայական-բուդղայականություն* և այլն:

Երկրորդ մասնակաղապարով կերտված բառերն առավել տարածված են: Այստեղ արդեն այլաբերության երևույթը կարող է չգործել: Օրինակ *կյուրոսասիրություն* (ՀԽ), *գրիգորապաշտություն* (ՀԽ) և այլն: Նման բառերի իմաստը կոնկրետացվում է տեքստում, քանզի նրանից դուրս կառույցը կարող է նշանակել թե անվան հետ կապված իրողություն, թե այդ անունը կրող անձի հետ կապված իրողություն:

Ածականակերտ ածանցներից հաճախակի են հանդիպում *-ական*, *-յան* ձևույթները, որոնցից կազմվում են բավականին ակտիվ կաղապարներ: *Հատուկ անուն +ական* կաղապարով կառույցներն ունեն իմաստային երկու դրսևորում: Մի դեպքում, երբ հատկանունը հանդես է գալիս բուն անվանողական դերով, կառույցը ունենում է վերաբերության իմաստ: Օրինակ, «Բայց մի ամռան Չոդայից այստեղ եկած պարսիկ մի խումբ հարկահաններ արհամարհեցին *վաչեական* օրենքները...» (ՀԽ): «Հիմա դրան մաշելու անընդունակ էին իր գիրն ու մատյանը, նույնիսկ *անիական* կարոտը...» (ՎԽ): «Այսպես այնքան, մինչև մթնեց բոլորովին և կտրվեց *տարոնական* խելատ անձրևը» (ՎԽ): «Նման էին արծվենի *երվանդական* քթերով, զանգուր մազերով, գեղեցիկ շուրթերով» (ՀԽ) և այլն: Մի այլ դեպքում հատկանունը համըմբոնման օրինակով ձեռք է բերում բառիմաստ, և կառույցը հատկանշային գործառույթ է ունենում, ինչպես. «-Դու չես կարողանում աշխարհին նայել *երվանդական* բարձրությունից...» (ՀԽ): «-Ապավեն եղիր ինձ, մեծ արքա, ես պատրաստ եմ բոլոր աստվածներին ու բոլոր հավատները Տրտուի մեջ նետել, միայն թե հոգուս հետ ծուլված մնա *տիգրանականը*, այսինքն հայկականը» (ՀԽ) և այլն: *Հատուկ անուն +յան* կաղապարով կերտված բառերը համատեղում են

վերաբերության և հատկանշային իմաստները, օրինակ. «Սա բարձրացել էր վաղ լուսաբացին, իր Դվինի այգեբացի կարոտից խեղդվելով՝ դուրս էր եկել տնից շրջակա սար ու ձորում *դվինյան առավոտ գտնելու*» (ՎԽ): «Իսկ ամեն ինչ հոտոտող, ամեն ինչ լրտեսող Կունձիկ աբեղա՞ն... Չի կարող չիմանալ, իր հանդիպումները բազմաթիվ են եղել աղջկա հետ, մա որևէ *կունձիկյան* հնարքով, խարդավանքով կարող էր իմանալ...» (ՄՍ) և այլն:

Հատուկ անուններից բայակերտման գործընթացը, որ հայերենի բոլոր փուլերին հատուկ լեզվական իրողություն է, առանձնակի ակտիվություն ստացավ XXդ. երկրորդ կեսից: Կարծում ենք՝ սրան նախահիմք էր նաև ընդհանրապես բայակերտման գործընթացի աշխուժացումը հատկապես XX դարում: Տեղին է նշել Ա. Աբրահամյանի դիտարկումը. «Ժամանակակից գրական լեզուն, որ իր օրինաչափություններով ամուր թելերով կապված է մի կողմից մեր գրական լեզվի անցած շրջանների, մյուս կողմից բարբառների հետ, բայակազմական այս երևույթը գործադրում է առավել բեղմնավորությամբ ու ծավալումով...»:

Անվանական բառերից բայական բառերի կազմումը ժամանակակից հայերենի սիրած լեզվական-քերականական միջոցներից մեկն է, որի նպատակը նախ բայական բառույթների ցանկի ընդլայնումն է և ապա՝ քերականական որոշ հասկացությունների յուրահատուկ դրսևորումը...»:³

Մեր կողմից ուսումնասիրված բառերում տարածված են *հատուկ անուն+վ+ել*, *հատուկ անուն+ան+ալ* կաղապարներով բայերը, որոնցում գերակշռում է առաջին ձևը: Նման կառույցների արտահայտած հիմնական իմաստը հատկանիշի վերածման, ձեռքբերման, նմանեցման գաղափարն է: Օրինակ՝ «Թող Վարդանի հոգին ուժ տա ձեր բազկին *Ավարայրված* հողում Արցախի» (ՀՀ): «Կան շնչավոր, մարդու նման գերված քարեր. Ու սրտերում *արարատված* քար լռություն» (ՍԿ): Նշենք նաև ենթատեքստերում նրանց բազմազան դրսևորումների իմաստներից.

1. հիմքակազմ անձնանունը կրած անձի գործունեությանը համանման գործունեություն վարող, ինչպես՝ *ավոյանալ* (ՍԽ), *շապուհվել* (ՍԽ), *սերորվել* (ՍԽ) և այլն. «Էլ դժվար թե մի հայուկ *մերուժանվի* դրուժան,- Ոչ ոք էլ չի *վասակվի*, չի դառնա խաչս ատրուշան» (ՀՇ),
2. հատկանվան հետ կապված իրողության կարգավիճակում գտնվելը *աբելվել* (ՀՇ), *ասորեստանվել* (ՀՇ) և այլն. «Թող քո ճակատին թոշնեն ու թափվեն դափնիներդ այս նոր, *Ասորեստանվես*, կորցնես քո ողջ անցյալներն հզոր...»,
3. արտաքին տեսքով նմանվելը *արարատվել* (ՀՇ), *արաքսվել* (ՀՇ) և այլն. «Հայոց դրախտի յոթ գետերից հագիվ մի Զանգու, Վեր *արարատված* յոթ լեռնապարից մեն մի Արագած...»,

4. հատկանվան հետ կապված իրողությունն ունենալը *թարթառվել(Սև)*, *խաչենգետվել(Սև)*, *ջրաբերդվել(Սև)* և այլն. «Իմ կրցախը *խաչենգետված* ու *թարթառված* այգի, Նահապետված հույս է՝ ծնված Ձիգ աղեղից Չայկի»,
5. հատկանվան հետ կապված իրողության չափերի հետ համեմատվելը *արագածվել(ՉԸ)*, *մասիսվել(ՉԸ)* և այլն. «*Արագածված* խաղաղություն, դու ե՞րբ պիտի *մասիսվես*»,
6. անձի գործունեության հետ բովանդակային առումով կապված լինելը *չարենցվել(Սև)*, *սևակվել(Սև)* և այլն. «Իմ *չարենցված* տաղարանում Բառս սիրտ է, երդում»:

Գրողը նման կառույցների հիմքակազմ անունն ընտրելիս նախապատվությունը տալիս է նկարագրվող երևույթին համանման ավելի հայտնի երևույթի անվանը: Սա ամենատարածված միջոցն է և նպաստում է մտքի ընդգծմանն ու կարևորմանը: Սովորաբար ընտրվում են համաշխարհային պատմության, մշակույթի, գիտության մեջ հայտնի դարձած անուններ, օրինակ՝ *Արիլլես*, *Լենկ Թենուր*, *Լոխման*, *Չիտլեր*, *Չոմերոս*, *Սենտոր*, *Չուդա*, *Չունաստան*, *Շամիրամ*, *Չինգիզ*, *Օսկենցիմ*, *Քրիստոս* և այլն: Սեր իրականության մեջ հայտնի անուններից առավելապես գործածվում են պատմական անձնանունները:

Ինչպես տեսնում ենք, քննարկվող կառույցների հիմքակազմ անունները մեծ մասամբ գործածվում են այլաբերությամբ: Փաստորեն նման սեղծ միավորները, արտահայտելով որոշակի գաղափար, որի հիմքում կոնկրետ իրողություն է ընկած, և այդ գաղափարին վերագրելով վերածման, շարժման իմաստ, բավականին նպատակահարմար են: Սրանց հետագա ակտիվ տարածումը մեր լեզվում չի բացառվում: Չետաքրքիր է, որ հատուկ անուններից կերտված բայերը հանդիպում են առավելապես չափածոյում: Գուցե սրա պատճառը Շիրազի գրչի ազդեցությունն է, և գուցե նաև այն, որ լինելով լեզվական տնտեսման լավագույն օրինակներ՝ այս բառերը նպաստում են բանաստեղծական տողում սեղծ կառույցով որևէ գաղափարի առավելագույն արտահայտմանը:

XXդ. երկրորդ կեսից կերտված նման բայերը, ունենալով իմաստային բազմազան դրսևորումներ, լեզվաոճական տարբեր հարաբերություններ են ցուցաբերում, որոնք հանգամանորն քննարկել է լեզվաբան Սիլվա Մինասյանը:⁴

Սեր կողմից ուսումնասիրված լեզվական նյութում կիսահարադրմամբ կերտված բառեր համարյա չեն հանդիպում: Սրա պատճառն այս կառույցների էությունից է բխում: Չեղինակը մեծ մասամբ կիսահարադրման դիմում է տարբեր իրողությունների հետ կապված երևույթներ համատեղելու նպատակով, ինչն անհնար է հատուկ անունների պարագայում: Տարբեր անձանց կամ տեղանքների անունների համատեղումը միայն ու միայն նեղ խոսքային իրադրության պահանջով կարող է լինել: Օրինակ եգիպտացիներին դնելիս Անտոնիոս Էռապետը նրանց աստվածներից մեկի անունն է գործածում՝

եզիպտոսում իր իշխանությունը ցուցադրելու նպատակով «Աստվածային կեցվածք ընդունելով՝ եռապետն իջեցրեց ձեռքը և դիմեց ամբոխին»:

-Խոսում է *Անտոնիոս-Օգիրիսը*: Թող ունկնդրի իմն համայն աշխարհը» (Հես):

Այսպիսով, ինչպես նկատելի է, հատկանուններից կերտված բառերը հիմնականում գոյականներ, ածականներ ու բայեր են, որոնց հիմքում առավելապես ընկած են պատմական անուններ: Կարծում ենք այստեղ մեծ նշանակություն ունեն ժամանակաշրջանի (թե դարակեսի, թե դարավերջի) այն փոփոխությունները, որոնց արդյունքում գրականությունն իրականության հանդեպ նոր հարաբերություններով պայմանավորվեց, երբ պատմությունը սկսվեց ընկալվել նորովի, պատմական անձի արժեքավորումը կատարվեց նոր որակով, և այդ ամենը չէր բնութագրվում իբրև բացասական, նեղ անձնական երևույթ: Պատմության վերհանումը, նրա դասերի վերաարժեքավորումը բերեց նոր մտածողություն ու դրան համապատասխան լեզվահամակարգ, որտեղ իրենց կայուն տեղն ունեն արդեն հատուկ անուններից կերտված բառերը: Եվ այս ամենը ոչ միայն պատմավեպերում, այլև արձակի ու չափածոյի տարբեր ժանրերում ու ենթաժանրերում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.3. Պետրոսյանն, ի տարբերություն ընդունված դասակարգումների, «*Չայերենա-գիտական բառարան*»-ում հեղինակային բառերն առանձնացնում է և բառապաշարի ոչ գործուն շերտին վերագրում հետևյալ խմբերը՝ *հազվադեպ գործածվող բառեր, հնաբանություններ, նորաբանություններ, նեղ մասնագիտական բառեր, անհատական բառատեղծություններ, դիպվածային բառեր*:

2. Հանձնատված են հետևյալ բառարանների հետ ա) Աղայան Էդ., *Արդի հայերենի բացատրական բառարան*, 2հ., Եր., 1976թ., բ) Բարսեղյան Հ., *Չայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան*, Եր., 1973թ., գ) Էլոյան Ա., *Արդի հայերենի նորաբանությունների բառարան*, Եր., 2002թ., դ) ՀԱՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, 4հ., 1969-81թ.թ., ե) Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., *Սիջին հայերենի բառարան*, 2հ., Եր., 1987թ., 1992թ., գ) Մալխասյանց Ստ., *Չայերեն բացատրական բառարան*, 4հ., Եր., 1944-45թ.թ., է) Նոր բառգիրք հայկազեան լեզուի (վերահիշատ.), 2հ., Եր. պետհամալս. իրատ., 1979-81թ.թ.:

3. Տե ս Բերահամյան Ա., *Բայը ժամանակակից հայերենում*, Եր., 1962թ.:

4. Տե ս Մինասյան Ա., *Հատուկ անուններից կերտված բայեր*, Եր., 2004թ.:

ՀԱՍՏԱՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԳ- Գուրգեն Գաբրիելյան, ԳԴ-Գևորգ Դևրիկյան, ԶՀ-Զոյա Հովհաննիսյան, ՀԽ- Հայկ Խաչատրյան, ՀԴ- Հրազդան Հայկենց, ՀԴ-Հովհաննես Ղուկասյան, ՀԸ-Հովհաննես Շիրազ, ՄՍ- Մկրտիչ Սարգսյան, ՊՍ- Պարույր Սևակ, ՍԽ- Սոկրատ Խանյան, ՎԱ- Վարդան Ավետիսյան, ՎԳ- Վարդան Գրիգորյան, ՎԽ- Վիգեն Խնչոնյան, ՎՀ- Վարդան Հակոբյան